

Ս. ԷԶՄԻԱԾԻՆԸ ՎԵՆԵՏԻԿԻ  
ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐԻ ԺԸ-ԺԹ ԴԱՐԵՐԻ  
ԳԻՏԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆՈՒՄ

Մխիթարեանները վիթխարի գիտագրական ժառանգութեան մէջ պատշաճ տեղ է յատկացուած Ս. Էջմիածնին եւ ընդհանրապէս Ամենայն Հայոց Կաթողիկոսութեանն ու Հայոց Եկեղեցուն, որը պայմանաւորուած է Մխիթարեան ականդներով եւ Մխիթարեանների գործերով աշխարհագրական եւ տեղագրական ու համանուն գրքերի տեսակարար մեծ կշիռով:

Մխիթարը Հայոց Եկեղեցու վարդապետ էր ու նա Եւրոպա գնաց ոչ թէ դաւանական մղումներով, այլ այն համոզումով, որ պատմական Հայաստանի տարածքում կամ Պոլսում թուրքական իշխանութիւնների անմիջական ճնշման ներքոյ հնարաւոր չէր հայ վանական այնպիսի մի հաստատութեան հիմնումը, ինչպիսին ինքն էր պատկերացնում:

Երկրորդ հանգամանքը, ինչպէս ասացինք, Մխիթարեան աշխարհագրութիւններն էին, որոնք ունէին երկու նպատակ, առաջին՝ ժողովրդին հաղորդել ընդհանուր աշխարհագրագիտական գիտելիքներ, երկրորդ՝ պատմական Հայաստանի աշխարհագրութեամբ բարձրացնել ազգային ինքնագիտակցութիւնը:

Մխիթարեան աշխարհագրագիտութիւնը սկզբնաւորուեց քարտեզագրութեամբ: Այն միայն գիտահանրամատչելի նպատակներով չէ, որ պայմանաւորուած էր, այլ ունէր շեշտուած ազգային քաղաքական ենթատեքստ: Մինչ այս հրատարակութիւնները աշխարհի քարտեզների վրայ բացակայում էր Հայաստանը եւ այն որպէս առանձին աշխարհագրական-քաղաքական միաւոր միջագային հանրութեանը ներկայացուեց Մխիթարեանների շնորհիւ:

«Գեղունի» հանդէսի բնորոշմամբ «երկու անբաժանելի գիտութիւններ կան. Հայաստանի Աշխարհագրութիւնն ու Պատմութեանը»:

Թիւնը, որոնք ամէնէն աւելի կը պանծացնեն երանաշնորհ Մխիթարի եւ իր հետեւորդներուն իմաստութիւնն ու առաքինութիւնը»<sup>1</sup>: Որպէս ուսումնական ձեռնարկներ գրուած ընդհանուր աշխարհագրութեան մի քանի դասագրքերից յետոյ Մխիթարը եւ իր աշակերտները ձեռնամուխ են լինում Հայաստանի աշխարհագրութեան կազմմանը: 1769 թ. հրատարակում է «Բառգիրք Հայկագեան լեզուի» բառարանի երկրորդ հատորը, ուր զետեղուած են նաեւ Հայաստանի տարբեր վայրերին նուիրուած բառայօդուածներ: Ինչպէս դիպուկ կերպով «Գեղունի»-ում է բնորոշուած. «Մխիթարեան այս անուանացուցակի հոգին Խորենացիի Հայաստանի աշխարհագրութիւնն է»<sup>2</sup>:

Նոր շրջանի բառարանագրական այս մեծ կոթողի յիշեալ երկրորդ հատորը թէեւ լոյս տեսաւ Մխիթարի մահից յետոյ, սակայն այն եւս գրուած է միաբանութեան հիմնադրի նոյն հոգով ու մեծապէս նրա աշխատանքն է նաեւ: Այստեղ աշխարհագրական անունների շարքում էջմիածին բառայօդուածի ներքոյ ասուում է. «Անուն մեծի հոյակապ եկեղեցւոյն եւ մօրն եկեղեցեաց Հայաստանեայց, զոր շինեաց Սուրբն Գրիգոր Լուսաւորիչ ընդ այլ երեք եկեղեցեաց՝ գործակցութեամբ Սրբոյն Տրդատայ արքայի եւ Աշխէն տիկնոջ յարքայանիստ Վաղարշապատ քաղաքի եւ յիրաւի կոչեցաւ էջմիածին, քանզի անդ էջ Միածին Որդին Աստուծոյ երկնային լուսով եւ անդ ծագեաց շող փառաց աստուածութեան նորա եւ յայնմանէ մեծ եւ անչափ թնդիւնք հնչեցին ի սանդարամէտս անդնդոց ըստ տեսլեանն, զոր ետես Սուրբն Գրիգոր: Եւ անդ է մինչե ցայսօր ժամանակի արթու կաթողիկոսացն Ամենայն Հայոց»<sup>3</sup>:

Դժուար չէ նկատել, որ այս բառայօդուածը շարադրանքի ոճով գեղարուեստական խտացումն է Լուսաւորչի տեսիլքի եւ Սահակ Զորափորեցու «էջ Միածինն ի Հօրէ» նշանաւոր շարականի: Մայր Տաճարի համար ասուած «մեծ հոյակապ» ու «Հայաստանեայց եկեղեցիների մայր լինել» արտայայտութիւնները շարունակութիւնները լինելով Թովմա Մեծոփեցու պատմութեամբ սկզբնաւորուած համանման բնորոշումների, Սեբաստա-

1 «Գեղունի», Վենետիկ, 1949, էջ 60:

2 Նոյն տեղում, էջ 62:

3 Բառգիրք Հայկագեան լեզուի, Վենետիկ, 1769, հտ. Բ:

ցիով միաժամանակ դարձան նաեւ մի նոր սկիզբ Մխիթարեան միջավայրում էջմիածնին տրուող բնորոշումներին: Բառայօդուածի վերջին նախադասութեամբ էլ արդէն անուղղակիօրէն շեշտում է, որ Ս. Էջմիածինն է հայ ժողովրդի հոգեւոր կենտրոնը:

ԺԸ դարից սկսուած թէ՛ կրօնագիտական տեսանկիւնից եւ թէ՛ բնագրաաղբիւրագիտական բառաքննութեամբ քանիցս անդրադարձ է եղել այն հարցին, թէ տեսիլի «այր մի ուռնաւոր» խօսքերով ում պէտք է նկատի ունենալ «Աստծոյ Միածին Որդուն», թէ «տեսչութեանն Աստուծոյ»: Այս բառայօդուածի «Անդ էջ Միածին Որդին Աստուծոյ եւ անդ ծագեաց շող փառաց աստուածութեան նորա» խօսքից յստակ երեւում է, որ Սեբաստացու համար քննութեան առարկայ նման հարց չի եղել:

Նոյնը վերաբերում է նաեւ Միքայէլ Չամչեանին, որը Հայոց Դարձին եւ Ս. Էջմիածնի հիմնմանը հանգամանալից կերպով անդրադարձել է իր եռահատոր «Հայոց Պատմութիւն»-ում: Անկախ նրանից, թէ Քաղկեդոնի ժողովի հանդէպ Հայոց եկեղեցու դիրքորոշումն ու հայ-հռոմէական յարաբերութիւնների նրա մեկնաբանութիւնները որքանով են վիճելի, Ս. Էջմիածնի Մայր Տաճարի հիմնման մասին նա գրում է Սեբաստացու նոյն ոգով: Ազատանգեղոսի ոճով ներկայացնելով Հռիփսիմեանց կոյսերի նահատակութեան վայրերում վկայարանների կառուցումը, այնուհետեւ ասում է, թէ վկայարանների կառուցումից յետոյ «պատեցին որմով եւ զայն տեղի, ուր ի տեսեան ետես սուրբն Գրիգոր իջանել Միածնին Աստուծոյ առ ի շինել անդ եկեղեցի մեծ»<sup>4</sup>: Այսպէս դարձեալ շեշտելով, որ իջնողը դարձեալ Աստծոյ Միածին Որդին է եղել, այնուհետեւ Մայր Տաճարի շինութեան համար ասում է, թէ Լուսաւորիչը կեսարիայից վերադառնալով «ձեռն էարկ շինել զհոյակերտ եկեղեցին էջմիածնայ»:

Չամչեանը մեր ձեռագիր ժամանակագրութիւնների ժամանակագրական աղիւսակների հետեւողութեամբ տարբերութիւններ կայացնում է էջի գրադաշտից դուրս, լուսանցքում դրուած թուերով: Ժամանակագրութեան ներկայացման այս ձեւում Լուսաւորչի վիրապից ելնելու դիմաց նշուած է 301 թուականը:

4 ՉԱՄՉԵԱՆ Է. ՄԻՔԱՅԷԼ, Պատմութիւն Հայոց, հտ. Ա, Վեներտի, 1784, էջ 388-89:

Վիճելի կամ տարակոյս ներկայացնող հարցերին նա անդրադառնում էր աղբիւրների համադրական քննութեամբ, յաւելեալ ծանօթութիւններ տալով «Հայոց Պատմութեան» երեք գրքերից իւրաքանչիւրի վերջում: Լուսաւորչի Վիրապից ելնելու, որը հայոց արքունիքի քրիստոնէութեան ընդունումով թուականն է նաեւ Հայոց դարձի, որեւէ ժամանակագրական քննութեան չենթարկելը ցոյց է տալիս, որ Չամչեանի համար 301 թուականի վաւերականութեանը կասկածելու հարկն իսկ չի եղել:

Անհրաժեշտ է նշել, որ մինչեւ ԺԸ դարի կէսը հայ մատենագրութեան ժամանակագրութեան ընդունուած աւանդոյթով, երբ իւրաքանչիւր գործի եւ իրադարձութեան ժամանակ ասուում էր, թէ այն որ Հայրապետի գահակալութեան եւ այդ գահակալութեան որ տարում կատարուեց, Մխիթարեանները նշում էին, թէ այն, որ Հայրապետի գահակալութեան շրջանում է լոյս տեսել: Նոյն Չամչեանի Պատմութեան տիտղոսաթերթին գրուած է, որ այն տպագրուել է «ի Հայրապետութեան Տեառն Ղուկասու Հայոց կաթողիկոսի»:

Ղուկաս Ինճիճեանը Ս. Էջմիածնին անդրադարձել է երկիցս, թէ՛ «Ստորագրութիւն հին Հայաստանեայց» կոթողային գործում եւ թէ՛ «Հնախօսութիւն Հայաստանեայց» եռահատոր ուսումնասիրութիւնում: Վկայակոչելով Ագաթանգեղոսի պատմութիւնը իջման մասին գրում է, թէ «զայս կերպարան մարդոյ մեկնեաց հրեշտակն»<sup>5</sup>: Այնուհետեւ սակայն իսկոյն աւելացնում է, որ թէեւ ըստ տեսիլը բացատրող հրեշտակի իջնողը «Աստոյ տեսչութիւնն» էր, սակայն «յետագայք զտեսչութիւն Աստուծոյ ի նոյն ինքն ի Միածինն Յիսուս Քրիստոս մեկնեցին, որպէս եւ բան շարակնոցի»<sup>6</sup>: «Բանն շարակնոցի» խօսքերով, բնականաբար, նկատի ունի Սահակ Զորափորեցի Կաթողիկոսի շարականը: Ընդգծելով որ Էջմիածինը կառուցուել է Լուսաւորչի տեսիլի համաձայն, Մայր Տաճարը անուանում է հռչակաւոր եկեղեցի. «Տեղի այսր հռչակաւոր եկեղեցւոյ ի հրեշտակէ ցուցաւ տեսլեամբ առ Սուրբն Գրիգոր ի ձեռն հրեղէն սեան»<sup>7</sup>: Ինճիճեանը երկիցս ընդգծում է Մայր Տաճարի Հայաստանեայց եկեղեցիների

5 Ինճիճեան Ն. ՂՈՒԿԱՍ, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822 թ., էջ 476:

6 Նոյն տեղում:

7 Նոյն տեղում:

Մայր Եկեղեցի լինելը: Նախ գրում է «Եւ այնպէս առաջին գտաւ տեղի ի մէջ Հայաստանեայց, որոշեալ ի շինութիւն եկեղեցոյ», ապա նոյն ոճով ակելացնում է. «Այսպէս երեւելի գտաւ այս եկեղեցի կաթողիկէ անուանեալ ի նախնեաց, իսկ ի յետագայից էջմիածին կոչեցեալ ի խորհուրդ տեսեան սրբոյն Գրիգորի»<sup>8</sup>:

Հայաստանի հնախօսութեանը նուիրուած գործի երրորդ հատորի հայոց եկեղեցուն նուիրուած բաժնում շեշտում է յատկապէս Հայոց Եկեղեցու առաքելահիմն լինելը: Վկայակոչելով Խորենացու Պատմութեան երկրորդ գրքի 91-րդ գլուխը, որում Սուրբ Գրիգորի համար ասում է, թէ նստեց Թաղէոս առաքեալի աթոռին, կատարում է հետեւեալ եզրայանգումը. «Եւ այսպէս Սուրբն Գրիգոր իրաւամբ կոչի յաջորդ Թաղէոսի եւ աթոռ նորին՝ աթոռ Սրբոյն Թաղէոսի»<sup>9</sup>:

Հայոց Եկեղեցու «Տօնացոյց» անցած թէ՛ հայ եւ թէ՛ Ընդհանրական Եկեղեցու սրբերին է նուիրուած Մկրտիչ Աւգերեանի 12 հատորանոց «Լիակատար վարք եւ վկայաբանութիւնք սրբոց» կոթողային աշխատանքը: Քանի որ այն կազմուած է ոչ թէ ըստ սրբերի անունների այբբենական կարգի կամ ժամանակագրական հերթականութեան, այլ ըստ տօնախօսական ընթացքի, միեւնոյն սրբի մասին, ըստ տօնացոյցային յիշատակութիւնների կարող է գրուել մի քանի տեղերում: Նոյնը վերաբերում է եւ Լուսաւորչին: Առանձին-առանձին ներկայացուած են Ս. Գրիգորի Վիրապը նետուելը եւ ելնելը, ինչպէս նաեւ նշխարների գիւտը:

«Ելն ի վիրապէն» տօնի առիթով Աւգերեանը հանգամանալից անդրադառնում է նաեւ էջմիածնի Մայր Տաճարի հիմնմանը: Հայ միջնադարեան վարքերի ու վկայաբանութիւնների գեղարուեստական խտացմամբ գրում է. «Ընդ լուսոյն զօրք անչափ լուսեղինաց երկթեւեանք ի տեսիլ մարդկան եւ որ զառաջսն ունէր ի նմանութիւն որդւոյ մարդոյ՝ ահեղ տեսեամբ սլացեալ գայր իբրեւ զարծուի»<sup>10</sup>:

<sup>8</sup> Նոյն տեղում, էջ 474:

<sup>9</sup> Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հտ. Գ, Վենետիկ, 1835 թ., էջ 256:

<sup>10</sup> Ա.Ի.ԳԵՐԵԱՆ Է. ՄԿՐՏԻՉ, Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց, հտ. Գ, Վենետիկ, էջ 43:

Մխիթարեան նախորդ հեղինակներից իւրաքանչիւրի համար եթէ յստակ է այն հարցը, որ Աստծոյ Որդին է իջել, թէ «Տեսչութիւն Աստուծոյ», ապա Աւգերեանի մօտ ներքին մի տարակոյս կայ եւ նկատելի է, որ ինքն էլ չի կարողանում յստակօրէն պատասխանել այս հարցին: Եթէ վերը բերուած հաստուածում նկատի ունի Աստծոյ տեսչութիւնը, ապա քիչ անց էջմիածնի տեղագրութեան մասին գրելիս ասում է. «գտեղի չինուածոյ տաճարին Աստուծոյ է, որ է կաթողիկէն Վաղարշապատու ի տեղի իջման Միածնի»<sup>11</sup>, որով արդէն յստակօրէն ասուում է, թէ Միածինն է իջել:

Ինչպէս գիտական, այնպէս էլ ազգային-հոգեւոր տարբեր հարցերում Մխիթարեան ըմբռնումների գրական արտայայտութեան բարձրակէտը Ալիշանի ստեղծագործութիւններն են: Նոյնը վերաբերում է եւ Ս. էջմիածնին: Այս իրողութիւնը պայմանաւորուած է այն հանգամանքով, որ հետազօտուող նիւթի վրայ խոնարհուած գիտնականի հայեացքից վերեւ կախուած էր Վարուժանի բնորոշմամբ «իր հսկայական տաւիղը», ու երբ աւարտուում էր քննութիւնը հերթական երկաթագիր մատեանի կամ պատառիկ պահպանակի, այդ տաւիղի լարերը գիտական շարադրանքին խառնում էին ստեղծագործական հրդեհի վերածուած, դարձեալ Վարուժանի բնորոշմամբ «անցեալի նշոյլը»<sup>12</sup>, որով են գրուած նաեւ էջմիածնին նուիրուած ալիշանեան տողերը «Տեղագիր Հայոց Մեծաց»-ից մինչեւ «Այրարատ»:

«Տեղագիր Հայոց Մեծաց»-ում Ալիշանը էջմիածինը անուանում է «Նշանաւոր ընդ ամենայն Հայս», քանի որ այստեղ է գտնուում «Աթոռ մեծի կաթողիկոսին հայոց»<sup>13</sup>: Ալիշանը եւս էջմիածնի նուիրականութիւնը առաջին հերթին պայմանաւորում է Լուսաւորչի տեսիլով. «Աստ ետես Ս. Գրիգոր զհրաշալի տեսիլն իջման Միածին Բանին եւ զբայտելն ուռամբ զհիմունս երկրի, վասն այսորիկ կոչեցաւ տեղին էջք-Միածին կամ էջ-Միածին եւ անուանի եղեւ եւ է հաստատութեամբ ի նմա քահանայապետական աթոռոյ Հայոց»<sup>14</sup>:

<sup>11</sup> Նոյն տեղում:

<sup>12</sup> ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ, Երկերի լիակատար ժողովածոյ, երեք հատորով, հտ, Գ, Երեւան, 1987 թ., էջ 182:

<sup>13</sup> ԱԼԻՇԱՆ Հ. ՂԵՒՈՆԻ, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855 թ., էջ 65:

<sup>14</sup> Նոյն տեղում:

Եկեղեցական նուիրապետութեան առումով էլ այս նուիրականութիւնը արտայայտուում է նրանով, որ շնորհիւ ԺԵ դարից այստեղ վերահաստատուած Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը նախապատիւ է համարուում «Ամենայն պատրիարքաց եւ Կաթողիկոսաց Հայոց»<sup>15</sup>:

«Այրարատ»-ում Ալիշանը հոգեւոր մի ներքին խորհուրդ է, գտնում այն իրողութիւնում, որ Վաղարշապատի արքայական փայլի խամբելուց, այսինքն՝ Թագաւորանիստ լինել դադարելուց յետոյ այն լուսաւորուեց հոգեւոր պայծառութեամբ, դառնալով կաթողիկոսանիստ. «Այս անուն յետ նուագելոյ Վաղարշապատու յաշխարհական շքոյ եւ ետ այնր՝ մայրաքաղաքացն հայոց, Ժառանգեաց զառաջնորդութիւն բովանդակ շինից Հայաստանեայց, մանաւանդ յետ վերահաստատութեան ի նմին Հայրապետական աթոռոյ՝ զկիսով ԺԵ դարու, որպէս եւ անդստին ի սկզբանէ Դ - դարու յաւուրց անտի մեծացն Տրդատայ եւ Գրիգորի՝ առաջնապատիւ էր յեկեղեցիս, նովին լուսաւորչաշէն աթոռով, ուր եւ նստան զամս իբր հարիւր եւ երեսուն՝ յաջորդք նորին համարիւն որդիքն եւ թոռանք՝ ցմեծն իսահակ»<sup>16</sup>: Այստեղ կարեւոր է նաեւ այն, որ Ալիշանը եւս մէկ անգամ շեշտում է, որ ԺԵ դարում հայրապետական աթոռի վերահաստատմամբ Ս. Էջմիածնում, այն առաջնապատիւ է դառնում, ինչպէս որ էր Դ դարում:

Անդրադառնալով իջման հարցին գրում է. «Անդ էջ Միածինն, որպէս յստակօրէն իմանայ ազգս»<sup>17</sup>: Այս խօսքերով նրբին կերպով ցանկանում է ասել թէ ազգի մէջ ընդհանրացած կարծիք է այս ընբռնումը, սակայն ինքը վկայակոչելով տեսիլը Լուսաւորչին մեկնող, բացատրող հրեշտակի խօսքերը գտնում է, որ «ոչ յայտնապէս զՈրդին Աստուծոյ ցուցանէ», այլ ինչպէս Ագաթանգեղոսի պատմութիւնում է ասուում. «Այս Տեսչութիւնն Աստուծոյ է»: Սակայն որպէսզի հակադրուած չլինի հայոց Եկեղեցական աւանդոյթին, անմիջապէս աւելացնում է, թէ «չարական Շողակաթին վկայէ», որ «յառաջին դարուց քրիստոնէութեան ազգիս՝ այսպէս հաւատացին զՈրդին Աստուծոյ նշանակել առնն սքանչելուոյ»:

15 Նոյն տեղում, էջ 66:

16 ԱԼԻՇԱՆ Է. ՂԵՒՈՆԴ, Սյրարատ, Վեներտիկ, 1890, էջ 209:

17 Նոյն տեղում:

Ներկայացնելով Էջմիածնի պատմութիւնը հիմնուածից մինչեւ ԺԵ դարը, ասում է, որ թէեւ կան կիլիկիոյ եւ Աղթամարի կաթողիկոսութիւնները, սակայն «ամենայն հայք, որ յերկրի իւրեանց եւ որք ի սփիւռս աշխարհաց՝ հնազանդին աթոռոյն էջմիածնի»: Այս խօսքերը ակնյայտօրէն վկայում են, որ ըստ Ալիշանի «ամենայն հայք» թէ՛ բուն երկրում եւ թէ՛ «որք ի սփիւռս աշխարհաց» հնազանդւում են Ս. Էջմիածնին, անկախ կաթողիկոսական աթոռի կամ դաւանանքի պատկանելութեան: Նաեւ առաջինը Ալիշանի մօտ եւ Ս. Էջմիածնին նուիրուած ենք գտնում «ի սփիւռս աշխարհաց» արտայայտութիւնը, որը յատկապէս Մեծ Եղեռնից յետոյ, դժբախտաբար, ընդհանրացուած մի հասկացութիւն էր դառնալու մեր կեանքում:

Հարեւան մահմեդականները Էջմիածինն անուանել են Ուչքիլիսէ՝ երեք եկեղեցիների վանք: Էջմիածնին տրուած այս անունը այնքան է ընդհանրացել, որ Բագաւանում կառուցուած եւ ի պատիւ Էջմիածնի դարձեալ Ս. Էջմիածին անուանուած եկեղեցուն եւս տեղացիները տուել են Ուչքիլիսէ անուանումը, թէեւ այնտեղ միայն մէկն է եկեղեցին եւ այս անուանումը օտարների տուած ընտրուումն է, որը բուն Էջմիածնից հասել եւ տրուել է նաեւ նրան:

Էջմիածինն յայպէս երեք եկեղեցիներ է կոչուել ի պատիւ Մայր Տաճարի, Հռիփսիմէի եւ Գայիանէի: Այս անուանումը ընդհանրացել էր մինչեւ ԺԷ դարի վերջը, երբ ձեռամբ Նահապետ Եղեռնիացի կաթողիկոսի դեռեւս չէր կառուցուել Շողակաթի եկեղեցին: Ալիշանը Ուչքիլիսէ օտար այս անուանումը եւ երեք եկեղեցիների նրա իմաստը գեղարուեստական մի նոր ստուգաբանութեամբ է ներկայացնում «Այրարատում», երեք եկեղեցիներից անջատելով եւ որպէս կենտրոնական դարձնելով Մայր Տաճարը եւ միւս երկուսին յաւելելով նաեւ արդէն կառուցուած Շողակաթի եկեղեցին եւ որպէս աւերակ միայն յայտնի Առապարի Սուրբ Գրիգորը՝ Զուարթնոցը: Ալիշանի իսկ ընտրությամբ «Շուրջ գէջմիածնիլ՝ իբրեւ արբանեակք Մեծի լուսաւորի աստեղ՝ կան չորեք եկեղեցիք կամ վանք, յորոց միսն ի սպառ խաւարեալ եւ խաթարեալ»<sup>18</sup>:

<sup>18</sup> Ա.Լ.ԻՇԱՆ Հ. ՂԵԻՌՆԻ, Այրարատ, էջ 234:

Այսպիսով Էջմիածնի Մայր Տաճարը դառնում է մի աստղ շրջապատուած չորս արբանեակներով: Նրանցից մէկի համար ասելով «խաւարեալ եւ խաթարեալ» նկատի ունի Զուարթնոցի ակերակները, որոնք դեռեւս պեղումներով լոյս աշխարհ չէին եկել եւ միայն տեղն էր յայտնի: Զուարթնոցին տրուած «խաւարեալ եւ խաթարեալ» բնորոշման մէջ եթէ «խաթարեալ»-ով նկատի ունի տաճարի ակերակ վիճակը, ապա «խաւարեալ»-ը դարձեալ գեղարուեստական պատկերաւոր զարգացումն է Զուարթնոցին տրուած «հանգած եկեղեցի» ժողովրդական անուանման:

Հայոց դարձի 1600-ամեակի օրերին Ս. Ղազարում լոյս է տեսնում Մխիթարեան հանրագիտակ հայրերից Էփրիկեանի «Բնաշխարհիկ բառարան»-ի առաջին հատորը, որի Էջմիածնին նուիրուած ծաւալուն բառայօդուածը եւս Մխիթարեան նոյն անդոյթով պայմանաւորուած ջերմութեամբ է գրուած: Էփրիկեանը Էջմիածնի տեղագրութեանը նուիրուած հատուածում գրում է. «Վաղարշապատու հարաւային կողմն կը գտնուի հնադարեան եւ հայ ազգի կաթողիկոսներու բնակավայր հռչակաւոր վանքս»: Նա եւս ընդգծելով Մայր Տաճարի ունեցած նշանակութիւնը հայ ժողովրդի համար, գրում է. «Տրդատայ սքանչելի դարձն պատճառ եղաւ Հայաստանի պարծանք Մայր Եկեղեցւոյ կառուցմանը ի պատիւ Ս. Հռիփսիմեանց նահատակութեան, ինչպէս որ հրեշտակը Ս. Գրիգորի Տեսեանն մէջ ցոյց տուած էր»<sup>19</sup>:

Հայոց Դարձը իր մէջ երեք գլխաւոր իրադարձութիւններ է ներառում: Առաջին՝ Ս. Գրիգորի Վիրապից ելնելը եւ հայոց արքունիքի քրիստոնէութիւն ընդունելը, որով 301 թուականին քրիստոնէութիւնը Հայաստանում հռչակուեց որպէս պետական կրօն: Ապա Կեսարիայից գալուց յետոյ Արածանիում Լուսաւորչի կատարած ընդհանրական մկրտութիւնը 302 թուականին եւ վերջապէս, Մայր Տաճարի կառուցումը 303 թուականին:

Մայր Տաճարի կառուցման 1600-ամեակի առիթով 1903 թ. Մխիթարեանները հրատարակում են Էփրիկեանի «Ս. Էջմիածին. 303-1903, Պատկերազարդ նկարագրութիւն» ակբոմատիպ գիրքը, որը «Բնաշխարհիկ բառարանի» Էջմիածնին նուիրուած ծաւա-

19 Էփրիկեան Ն. Ս., Բնաշխարհիկ բառարան, հտ. Ա, Վենետիկ, Ս. Ղազար, 1903-05, էջ 809-810:

լուն բառայօդուածի առանձին վերահրատարակութիւնն էր, որը սակայն առանձնանում է շապիկի եւ տիտղոսաթերթի գեղեցիկ ձեւաւորմամբ եւ առաջաբանով:

Մաղիկներով պատուած շրջանակի վերեւում Ս. Էջմիածնի գունաւոր նկարն է, նրա ներքեւում Խրիմեանի պատկերը ոսկեզօծ շրջանակի մէջ, ուր դարձեալ ոսկեզօծ են վեղարը, ինչպէս նաեւ կրօնքից կախուած խաչը:

Խրիմեանի նկարի մօտ կաթողիկոսական կոնդակները եւ ընդհանրապէս գալարածեւ փաթաթուող գրութիւնները յիշեցնող թղթի վրայ գրուած է. «Առ Նորին Վեհափառութիւնն Տ. Տ. Մկրտիչ Ա Մայրագոյն Պատրիարք եւ կաթողիկոսին ամենայն հայոց մեծարանօք նուիրի ի հարց Մխիթարեանց Վենետկոյ»: Այստեղ Խրիմեանի անունը նոյնպէս ոսկեզօծ է, որն ասես խորհրդանշում է, թէ Հայոց Հայրիկի անունը պատմութեան մէջ ոսկեայ տառերով պէտք է գրուի, իսկ «կաթողիկոս Ամենայն Հայոց»-ը գրուած է կարմիրով, ինչպէս միջնադարում էին ասում կարմրադեղով, որն ընդունուած ականդոյթով հայրապետական կնիքների եւ ստորագրութիւնների գոյնն է: Ընծայականի «Մեծարանօք նուիրի ի հարց Վենետկոյ» խօսքերով էլ միաբանութիւնը յանձինս Խրիմեանի իր յարգանքն է արտայայտում Հայոց հայրապետական աթոռի հանդէպ: Գրքի տիտղոսաթերթին էլ Մայր Տաճարի Հիմնարկութեան 1600-ամեակը անուանում է «Ազգային մեծ յոբելեան»:

Էփրիկեանի «Բնաշխահիկ բառարան»-ը իր մի զգալի մասով պարզ եւ գեղեցիկ արեւմտահայերէնով վերաշարադրանքն է նախորդ երկու դարերի Մխիթարեան մեծութիւնների տեղագրական գործերի, որոնք համապատասխան վերաշարադրմամբ գետեղուած են այբբենական ցանկով ընթացող համապատասխան բառայօդուածների ներքոյ: Նոյնը վերաբերւում է նաեւ այս գրքոյ կին, որով այն սկսուող ի դարում խորհրդանշական եւ ընդհանրացուած կերպով ներկայացնում է Ս. Էջմիածնի եւ Հայոց Հայրապետական աթոռի հանդէպ Մխիթարեան միջավայրում նախորդ երկու հարիւրամեակների ընթացքում առկայ վերաբերմունքը իր գիտագեղարուեստական արտայայտութիւններով եւ յարգութեան աստիճանը: